Գուրգեն Մահարի

Սեւ մարդը

Գործարանի բանվորական ակումբի բեմից ես նայում եմ ընդարձակ դահլիճում նստած հանդիսատեսներին և փնտրում իմ հերոսին: Գրականության և կյանքի կապի մասին խիստ շահեկան զեկուցումը (ինչպես նշված է աֆիշայում՝ «Զեկ. ֆիլոլոգիական գիտությունների թեկ. Հմ. Մրմրյան») մոտենում է իր վախճանին: «Պետք է»-ներին փոխարինեցին «անհրաժեշտ է, որ»-երը և համոզեցուցիչ ու կատեգորիկ «միայն այսպիսով մենք»-ը շարժեց ունկնդիրներին նախապատրաստելու համար ակումբային մասշտաբով բուռն ծափահարություններին:

Ծափահարությունները վերջացան: Հետո հանդես պիտի գանք մենք, բանաստեղծներս, պիտի արտասանենք մի-մի բանաստեղծություն: Ես արդեն գիտեմ, թե ով ինչ է արտասանելու: Ինչ վերաբերում է ինձ, ես արտասանելու եմ մի բանաստեղծություն, որն ահա երկու տարի է, ինչ բարեհաջող կերպով քարշ եմ տալիս կոլտնտեսությունից կոլտնտեսություն, գործարանից գործարան, ակումբից ակումբ. . . դա մի կարթ է, որով ես ուզում եմ որսալ իմ հերոսին, բայց բոլոր գրական երեկոներից ու հանդիպումներից հետո ես տուն եմ գնում դատարկ ձեռներով ու թափուր հոգով:

Ասել, որ ես հոգ չեմ տանում գրականության և կյանքի կապի մասին, ճիշտ չէր լինի: Ես, նման երեկոների ընդմիջումներին, ինչպես թերթերն են գրում, ինձ մոտեցող ընկերների հետ զրուցում եմ, սիրալիր կերպով «պատասխանում եմ նրանց հարցերին», ինքս եմ հարցեր տալիս և «ուշադրությամբ լսում նրանց պատասխանները», բայց այդ դիալոգները ոչ մի կերպ գրականության չեն

վերածվում, որովհետև չկա ամենագլխավորը . չկա հերոսը: Մտել է ինչ-որ տեղ, հետևում է իմ զուր ջանքերին, ծիծաղում է ինձ վրա, հնարավոր է անգամ, որ նա անցնում է կողքովս, անգամ խոսում է ինձ հետ, ու ես չեմ նկատում նրան, չե՛մ ճանաչում, չե՞մ բռնում . . .

— Տասը րոպե ընդմիջում, — հայտարարում է նախագահը, ու մենք դուրս ենք գալիս ծխելու և գրականության ու կյանքի միջև սերտ կապեր ստեղծելու: Ինչպես միշտ, մեզ շրջապատում են հանդիսականները, և մենք սիրալիր կերպով պատասխանում ենք նրանց հարցերին, ինքներս ենք հարցեր տալիս և մեծ ուշադրությամբ լսում նրանց պատասխանները:

Մեկը քաշեց իմ թևից: Ես ետ եմ նայում:

Իմ դեմ կանգնած է միջին տարիքի մի մարդ . կոկիկ հագնված է նա, ժպտում է երեք ոսկե ատամներով, թուխ-թխորակ, իսկ ճակատով մեկ սպիտակավուն սպին . . . Սպասի՛ր:

— Սանո՞ . . .

— Հա, ես եմ, Սանասարն եմ, անուշ ջան, ախպեր ջան . . .

— Որտեղից՝ որտեղ . . .

— Էնտեղից էստեղ, Գրիշ ջան, ասենք հիմի քեզ Գրիշա ասել չի կարելի . . .

— Ուրեմն քեզ էլ Սանո ասելն անհարմար է, ճի՞շտ է . . .

— Ցեխի վարիչ եմ, երեք անգամ պարգևատրված, — կարճ կապեց նա, լրջացավ, նայեց իմ աչքերին, բայց չկարողացավ պահել լրջությունը և ժպտաց ինձ քաջ ծանոթ ժպիտով: Ըստ երևույթին նա միանգամից շատ բան հիշեց այն օրերից և այնտեղից . . .

— Աշոտ դայի՞ն, — հարցրեց նա:

— Կպատմեմ: Դու անպայման անցիր ինձ մոտ՝ հյուրանոց:

— Ո՛չ մի հյուրանոց: Այստեղից գնում ենք ուղիղ մեր տուն:

Էլեկտրական լույսերը երեք անգամ հանգան ու վառվեցին: Մենք բեմ բարձրացանք: Նախագահին խոնարհաբար խնդրեցի ազատել ինձ արտասանելու պարտականությունից:

— Ոչինչ չեմ հիշում . . .